

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 57/7

25 դեկտեմբերի 2012թ.

Քննարկվեց <ԱԻԿ ԱԼԿՈ> ՍՊԸ 13.12.2012թ. դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.11.2012թ. թիվ 1003839 ստուգման ակտի դեմ:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.08.2012թ. թիվ 1003839 հանձնարարագրի ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում <ԱԻԿ ԱԼԿՈ> ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 15.11.2012թ-ին կազմվել է թիվ 1003839 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 20.215.105 դրամ:

<ԱԻԿ ԱԼԿՈ> ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

<ԱԻԿ ԱԼԿՈ> ՍՊԸ-ն Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ-ի հունվարի 10-ի որոշմամբ ճանաչվել է սնանկ, իսկ 2012թ-ի մայիսի 4-ի որոշման համաձայն, սկսվել է ընկերության լուծարային գործընթացը:

2012թ-ի մարտի 21-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում հարուցվել և ներկայումս քննչական վարչությունում քննվում է ընկերության վերաբերյալ թիվ 83152912 քրեական գործը: Հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում 2012թ-ի հուլիսի 19-ին քննիչի որոշմամբ ընկերությունում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 07.08.2012թ-ին հրապարակվել է թիվ 1003839 հանձնարարագիրը՝ ընկերությունում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ:

2012թ-ի նոյեմբերի 15-ին կազմվել է թիվ 1003839 ստուգման ակտը, որով ընկերությանը լրացուցիչ բյուջե վճարման ենթակա գումար է առաջադրվել 20.215.105 դրամ, այդ թվում՝ հարկ 9.413.322 դրամ, տույժ 5.153.790 դրամ, տուգանք 5.647.993. դրամ:

Ընկերությունը համաձայն չէ կազմված ստուգման ակտի հետ, քանի որ ստուգումը կատարվել է ընկերությունում լուծարային գործընթացը սկսելուց հետո:

<Մնանկության մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, պարտապանի լուծարման գործընթացը սկսվելուց հետո ստուգում, կամ ուսումնասիրություն իրականացնելն արգելվում է բացառությամբ հարկերի և պարտադիր սոցիալական վճարների գերավճարների առկայությունը պարզելուն ուղղված ուսումնասիրությունների:

Տվյալ դեպքում ընկերությունում լուծարման գործընթացը սկսվելուց հետո կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Այսինքն, ստուգումն իրականացվել է հիշատակված իրավանորմի պահանջների խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից ընկերությունը խնդրում է ստուգման ակտը ճանաչել անվավեր:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ՀԱԻԿ ԱԼԿՈՒ ՍՊԸ ներկայացուցչի և ստուգման ակտը կազմած պաշտոնատար անձանց կողմից ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ ընկերության դիմում-գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2011թ-ի հունվարի 10-ի թիվ ԱՎԴ/0016/04/10 վճռի համաձայն, ՀԱԻԿ ԱԼԿՈՒ ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ-ի մայիսի 4-ի թիվ ԱՎԴ/0016/04/10 որոշման համաձայն, սնանկ ճանաչված ՀԱԻԿ ԱԼԿՈՒ ՍՊԸ-ի նկատմամբ սկսվել է լուծարային վարույթ:

Միևնույն ժամանակ 2012թ-ի մարտի 21-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում ընկերության նկատմամբ հարուցվել է թիվ 83152912 քրեական գործը, որի հետագա քննությունը տեղափոխվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչություն:

Քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչի կողմից 2012թ-ի հուլիսի 19-ին ընդունվել է որոշում, որի համաձայն ընկերությունում նշանակվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում: Արդյունքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի կողմից 07.08.2012թ-ին հրապարակվել է թիվ 1003839 հանձնարարագիրը, որի համաձայն ընկերությունում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգում և 2012թ-ի նոյեմբերի 15-ին կազմվել է թիվ 1003839 ստուգման ակտը:

<Սնանկության մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. <Պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանի մոտ ստուգում կամ ուսումնասիրություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ>:

Հանձնաժողովը գտնում է, որ ՀԱԻԿ ԱԼԿՈՒ ՍՊԸ-ում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 07.08.2012թ-ի թիվ 1003839 հանձնարարագրի հիման վրա կատարված բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգումը իրականացվել է <Սնանկության մասին> ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ, քանի որ համապատասխան դատարանի որոշում քննարկվող դեպքում առկա չէ:


<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. <Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.>:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ արկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 15.11.2012թ. թիվ 1003839 ստուգման ակտը:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԱՐՄԵՂՅԱՆ